«Հաստատում եմ»

<<Վանաձորի Գրիբոյեդովի անվան

N 11 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Ն.Ա. Սահակյան

01 սեպտեմբեր 2023թ.

# ՎԱՆԱՁՈՐԻ N 11 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ

Հ.Ռ. ԲՈՇՅԱՆ

2023-2024ՈՒՍՏԱՐԻ

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /նախապատրաստական մաս/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Մասնակցություն դպրոցի 2023-2024ուստարվա կատարված աշխատանքների ամփոփմանը և նոր ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախապատրաստմանն ու կազմմանը: | Ուսումնական գործընթացի արդյունավետու-թյան բարձրացում: | Օգոստոս |
| 2. | 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի կազմում: | Ուսումնական գործընթացի կազմակերպում: | Օգոստոս |
| 3. | 2023-2024 տարեկանից կամ փոխադրական քննություններից մեկ կամ երկու առարկաներից անբավարար գնահատված ու ամառային առաջադրանքներ ստացած աշակերտներից վերաքննությունների կազմակերպում,ընդունում և փոխադրման – ավարտման ձևակերպում: | Փոխադրման գործընթացի կազմակերպում և փաստաթղթերի վերջնական ձևակերպում : | 22-25 օգոստոս |
| 4. | Դասարանների կոմպլեկտավորում: | ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և դպրոցի ըն-դունելության կարգի պահպանում: | Մինչև օգոստոսի 31 |
| 5. | ՈՒսումնական աշխատանքների նախապատրաստման և իրականացման համար անհրաժեշտ ձևաթղթերի /թեմատիկ պլանների ,դասարանական խմբերի և դասարանների այբբենական ցուցակներ և այլն / նախապատրաստում: | Ուսումնական գործընթացի կազմակերպում: | Սեպտեմբեր 5-10 |
| 6. | Ավագ դպրոցի սովորողների ընդունելության գործընթացի կազմակերպում, աշխատանքների համակարգում,հոսքային առարկաների ընտրության դիմումների կազմում : | ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և ավագ դպրոցի ընդունելության կարգի պահպանում: | Օգոստոս – սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Ավագ դպրոցի դասարաններին դասարանախմբերի կոմպլեկտավորում,հոսքերի և ենթահոսքերի ձևավորում,խորացված և հարակից առարկաների ընտրություն: | ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և ավագ դպրոցի ընդունելության կարգի պահպանում | Մինչև Օգոստոսի 31 |
| 8. | Ծանոթացում ուսումնական ծրագրերի,չափորոշչային պահանջների,դասագրքերի վերջին փոփոխություններին, տեղեկատուներին,մեթոդական նամակներին,կից գրու-թյուններին և ուղեցույցներին, դրանց քննարկումներ առարկայական մասնախմբերի նիստերում: | Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերահսկում, թեմատիկ պլանների կազմում : | օգոստոս-սեպտեմբեր |
| 9. | 2023-2024 ուստարվա առարկայական մասնախմբերի ձևավորում: | Մեթոդմիավորման կանոնադրության Պահպանում , մեթոդմիավորումների աշխատանքների կազմակերպում<br>: | Օգոստոս |
| 10. | Նոր ուսումնական տարվա հենքային ուսպլանի ծանոթացում: | Հենքային ուսպլանի պահանջների կատարում: | օգոստոս |
| 11. | Դպրոցի 2023-2024 ուստարվա ՈՒՍՊԼԱՆ-ի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի վերաբերյալ առարկայական մասնախըմբերում կատարված քննարկումներ և դրանց հիման վրա այդ ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մ/խ նիստում առաջարկությունների առաջադրում: | Հենքային ուսպլանի պահանջների կատարում: | Ըստ անհրաժեշտության |
| 12. | 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի վերջնական դասաբաշխման իրականացում մասնախմբերի նիստերում: | Դասաբաշխման համապատասխանեցում ուսուցիչների մանկավարժական վարպետությանն ու փորձին,միջին ծանրաբեռնվածության ներկայացում | օգոստոսի 22-30 |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցեր /դասացուցակ և մեթոդմիավորումներ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Դասացուցակի կազմում 1-ին կիսամյակի համար,դասացուցակի ընթացիկ սպասարկում: | Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն | օգոստոսի 25-սեպտեմբերի 1 |
| 2. | Բացակա ուսուցիչների հաշվառում,բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում: | Դպրոցի կանոնադրություն | Ուստարվա ընթացքում |
| 3. | Առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանների կազմում և հետագա աշխատանքների համակարգում, ամենամսյա նիստերի գումարում: | Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում | Մինչև սեպտեմբերի 4-ը և ուստարվա ընթացքում |
| 4. | Առարկայական ծրագրերին,չափորոշչային պահանջներին ,հատկացված շաբաթական ժամաքանակին համապատասխան թեմատիկ-օրացուցային պլանների կազմում և հաստատում: | Առարկաների օրացույցային – թեմատիկ պլանների որակական չափանիշների սահմանում | Սեպտեմբերի 1 |
| 5. | Ծանոթացում նոր ուստարվա գնահատման համակարգին | Գնահատման չափանիշների,ձևերի և մեթոդների ապահովում | սեպտեմբեր |
| 6. | Միավորային գնահատման բաղադրիչների՝ բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների քանակի ճշտում ըստ առարկաների ,դասարանների և հատկացված շաբաթական ժամաքանակի, ձևավորող ,հայտորոշիչ գնահատման մասին տեղեկատվության տրամադրում : | Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում | Սեպտեմբեր |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /մանկավարժական գործունեություն/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Սեմինար-քննարկումներ մեթոդմիավորման նիստերում չափորոշիչ, օրացուցային և թեմատիկ պլաններ, օրվա պլան, գնահատում, ներառական կրթություն ,մեթոդ և հնարք,ուսուցչի վարվելակերպ և այլ մանկավաժական ու հոգեբանական թեմաներից: Քննարկումներն ըստ անհրաժեշտության կկատարվեն նաև հեռավար : | Առաջավոր փորձի փոխանակում, հաղորդակցում գիտամեթոդական նորույթներին | ուստարվա ընթացքում |
| 2. | Թեմատիկ և օրացուցային առարկայական ուսումնական պլանների,առարկայական չափորոշչային պահանջների, գնահատման նորմատիվների կատարողականի ընթացիկ վերահսկողություն: | Ուսումնական գործընթացի համակարգում և վերահսկողություն | ուստարվա ընթացքում |
| 3. | Առանձին ուսուցիչների ,այդ թվում դպրոց նոր ընդունված , աշխատանքային գործունեության ուսումնասիրություններ, դրանց քննարկում մեթոդմիավորման և մանկավարժական խորհրդի նիստերում: | Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 4. | Մ/Մ նախագահների հետ համատեղ կազմակերպել միջոցառումներ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների կարողություններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ: | Դպրոցի կանոնադրություն | ուստարվա ընթացքում |
| 5. | Մանկավարժական գործունեության վերահսկողություն՝ աշակերտների իրավունքների պահպանման ուղղությամբ: | Գրավոր,գործնական, տնային և դասարանական աշխատանքների չափանիշների պահպանում | ուստարվա ընթացքում |
| 6. | ՄԽ որոշումների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում | Դպրոցի կանոնադրության պահանջներ | Ուստարվա ընթացքում |
| 7. | Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով | Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր | |

| | | | |
|---|---|---|---|
| | | մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում | |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/առարկայական ուսումնասիրություններ / | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Մ/Մ նախագահների հետ համատեղ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման, դիդակտիկ նյութերի կիրառման, կաբինետների ու դասի կահավորման, թեմատիկ, փոխներգործուն ; համագործակցային,բաց և օրինակելի դասերի ու դասմիջոցառումների անցկացման ընթացքը: Դպրոցը համալրվել է չորս առարկայական կաբիներներով ՝ քիմիայի ,կենսաբանության ,աշխարհագրության , ֆիզիկայի : Նախատեսված է հետևել , որ դրանց գործածությունը լինի լրիվ չափով և արդյունավետ : | Առաջավոր փորձի փոխանակում, հաղորդակցում գիտամեթոդական նորույթներին | ուստարվա ընթացքում |
| 2. | Ըստ ուսպլանի և ուսումնական առարկաների ծրագրային, ուսուցանվող նյութի բովանդակային ու դասավանդման մեթոդական պահանջների յուրաքանչյուր դասարանում, տարբեր առարկաներից համակարգչային դասարաններում անցկացվող դասերի վարում: | Ուսպլանի հավելվածների պահանջներ | ուստարվա ընթացքում |
| 3. | Մ/Մ-ներում առանձին առարկաների դասավանդման ուսումնասի-րություններ.<br>ա. ուսումնասիրություններ նորակազմ 10-րդ դաս. -ում<br>բ. հայոց լեզվի և գրականության դասավանդումը հոսքային դաս.<br>գ,մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդումը հոսքային դաս. -ում<br>դ. օտար լեզուների ուսուցումը հոսքային դասարաններում.<br>ե. բնագիտական առարկաները որպես հոսքային կամ հարակից.<br>գ.ֆիզկուլտուրայի և ՆԶՊ-ի ուսուցման դրվածքը:<br>է. Նոր ձևավորվածԱԲ խորացված ուսուցմամբ դասարանում ուսուցման արդյունավետության դիտարկում<br><br>Կկազմակերպվեն նաև առարկայական միամսյակներ ՝ ըստ մեթոդմիավորումների . | Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | ✓ Հայոց լեզու և հայ գրականություն<br>✓ Մաթեմատիկա , ինֆորմատիկա , ֆիզիկա<br>✓ Բնագիտական առարկաներ ` քիմիա , կենսաբանություն , ՆԶՊ , ֆիզկուլտուրա<br>✓ Պատմություն և աշխարհագրություն<br>✓ Օտար լեզուներ / ռուսաց լեզու և անգլերեն / | Հոկտեմբեր<br>Նոյեմբեր<br>Փետրվար<br><br>Մարտ<br>Ապրիլ | |
| 4. | Մանկավարժների գործունեության արդյունավետության դիտարկում | Թեմատիկ և կիսամյակային աշխատանքների գնահատման օբյեկտիվություն | ուստարվա ընթացքում |
| 5. | Արտաքին ստուգման նպատակով ԳԹԿ-ի կողմից տրվող գրավոր աշխատանքների գործընթացի կազմակերպում և դրա արդյունքների ամփոփում ու վերլուծություն: | Արտաքին ստուգում | Ըստ անհրաժեշտության |
| 6. | Մեթոդական դասերի կազմակերպում ` նախագծային մեթոդի տեղայնացման , փորձարկման և կիրառման նպատակով | Մեթոդական արդյունավետության բարձրացում , գործնական աշխատանքների նախագծային տեսակի ներդրում | Ուստարվա ընթացքում ` ըստ նախապես կազմված ժամանակացույցի |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/դասալսումներ եվ գրավոր աշխատանքներ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից. հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա առարկաներից : | Սովորողների ընթացիկ գիտելիքներին,կարողություններին և հմտություններին ծանոթացում,դրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին | Մայիս |
| 2 | Մանկավարժների գործունեության վերահսկողություն՝ փոխադարձ դասալսումների կազմակերպում, դրանց քանակի ու գրանցումների իրականացում: | Առաջավոր փորձի փոխանակում | Ուստարվա ընթացքում |
| 3 | Աշակերտների հետ անհատական ուսուցման աշխատանքների կազմակերպում/ այդ թվում այլ օտար լեզու ուսանած , արտերկրից եկած , տնային ուսուցման կամ այլ պատճառով հեռավարի անցած աշակերտների հետ / | Մանկավարժների գործունեության վերլուծություն | ուստարվա ընթացքում |
| 4 | Դասալսումներ՝.<br>ա. նորակազմ դասարաններում<br>բ. փորձի փոխանակման նպատակով<br>գ. տարակարգման ենթակա ուսուցիչների մոտ՝բնութագրի կազմում<br>դ. Այլ ուսուցիչների մոտ՝մեթոդական աջակցություն կամ մեթոդի արդյունավետության դիտարկում | Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում | ուստարվա ընթացքում |
| 5 | Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությունը, խթանել օրվա դասի պլանի գործածումը ,բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը: | Ուսուցչի գործունեության ուսումնասիրում | ուստարվա ընթացքում |
| 6 | Վերահսկել ուսուցիչների աշխատանքային գործունեության ոլորտները. ծրագրային նյութի կատարողական, գնահատման, բաց դասերի և փոխադարձ դասալսումների գործընթացը, սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը կրթական չափորոշչային պահանջներին: | Մանկավարժների գործունեության վերլուծություն | ուստարվա ընթացքում |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/արտադասարանական գործունեություն/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Աշակերտների` քննությունների պատրաստվածության մակարդակի ստուգում մշտադիտարկումների և դասալսումների միջոցով | Հուզող հարցերի պարզաբանում և վերհանում,լուծումների առաջադրում | ուստարվա ընթացքում |
| 2. | Հրավիրել մանկավարժական խորհրդատվություններ, սեմինարներ, բանավեճեր, քննարկումներ, հաղորդումներ ուսուցման, գնահատման, կիսամյակային և տարեկան ամփոփումների, փոխադրման և ավարտման կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, emis.am-կայքի գործունեության, մանկավարժական մեթոդիկայի նորությունների, տարիքային հոգեբանության, արժեքային համակարգի ձևավորման, սովորողների և աշխատողների ներքին կարգապահական և այլ հարցերի վերաբերյալ: | Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում<br>Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում | ուստարվա ընթացքում |
| 3. | Մասնակցել ծնողական ժողովներին, ծնողական խորհրդի և աշխորհի նիստերին ու միջոցառումներին, դրանցում հանդես գալ ուսումնադաստիարակչական բնույթի հարցերի պարզաբանմամբ: | Ծնողներին ու աշակերտներին հուզող հարցերի պարզաբանում և վերհանում, համապատասխան լուծումների առաջադրում | ուստարվա ընթացքում ըստ անհրաժեշտության |
| 4. | Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմկոմիտեի կազմում և նիստերի գումարում,օլիմպիադայի խմբակների և թեմատիկ պլանների կազմում , պարապմունքների կազմակերպում ,խրախուսումների առաջադրում | Օժտված աշակերտների բացահայտում, նրանց հետ տարվող աշխատանքներ,օլիմպիադաների տարբեր աստիճաններում արդյունավետ մասնակցություն | Ուստարվա ընթացքում |
| 5. | Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում,դրանց արդյունքների ամփոփում և քննարկումներ մանկխորհում, մասնախմբերում, աշխորհում և ծնողխորհրդում:<br>ա. դպրոցական փուլ<br>բ. առցանց /եթեօլիմպիադայի տեսակն այդպիսին է /<br>գ. տարածաշրջանային փուլ<br>դ. մարզային փուլ<br>ե.հանրապետական փուլ<br>զ. Բուհական օլիմպիադաներ | Մրցույթներին և միջոցառումներին ,ուսուցիչների և աշակերտների հաջող մասնակցության ապահովում | Ուստարվա ընթացքում/դպրոցական փուլը դեկտեմբերին / |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /մատենավարություն եվ հաշվառում/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Դասարանների աշակերտների ցուցակների ճշտում դասղեկների հետ | Ուսումնական գործընթացի կազմակերպում | օգոստոս-սեպտեմբեր |
| 2. | Աշխատանքներ սահմանված ժամաքանակից ավել բացակայած աշակերտների հետ.<br>ա. 100 և ավել դասաժամ բացակայություն<br>բ .120 և ավել դասաժամ բացակայություն | Փոխադրման և ավարտման կարգի պահպանում | Ապրիլ -մայիս |
| 3. | Գերազանցիկ և մեդալի հավակնորդ աշակերտների հետ տարվող աշխատանքների նախապատրաստում և իրականացում: | Փոխադրման և ավարտման կարգի պահպանում | փետրվար-հունիս |
| 4. | Կիսամյակների ավարտին աշակերտների ընթացիկ գիտելիքների ստուգում և քննարկման կազմակերպում: | Կիսամյակի առաջադիմության վերլուծում, սովորողների գիտելիքների գնահատում | դեկտեմբեր-հունիս |
| 5 | Էլեկտրոնային մատյանների գրանցման,գնահատման,բացակայությունների հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում | Էլ.մատյանների պատշաճ լրացման ապահովում | Ուստարվա ընթացքում |
| 6 | Էլեկտրոնային մատյանների վարման մշտադիտարկում | Էլ.մատյանների պատշաճ լրացման ապահովում | Ուստարվա ընթացքում |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԿԱՐԳՈՒՄ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | Վերապատրաստման դասընթացներին , այդ թվում հեռավար , , սեմինարներին, մրցույթներին ուսուցիչների մասնակցության ապահովում: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 2. | Սկսնակ և սակավափորձ ուսուցիչների գործունեության վերահսկողություն: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 3. | Ինքնակրթության ուղղությամբ մանկավարժների գործունեության համակարգում | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 4. | Մանկավարժների կողմից կաբինետների, դասասենյակների. նախասրահների ձևավորում, դիդակտիկ և ուսուցման համար անհրաժեշտ այլ պարագաների հավաքագրում: | Ուսումնանյութական բազայի հարստացում | ուստարվա ընթացքում |
| 5. | Ուսուցիչների մեթոդական աշխատանքների կազմակերպում | Մանկավարժների մեթոդական գործունեու- թյան վերլուծություն | ուստարվա ընթացքում |
| 6. | Աշխատանք դասագրքերի հետ . ապահովվածություն, գործածում, պահանջագրերի և կարծիքների կազմում, փորձարկումներ և քննարկումներ | Ուսումնանյութական բազայի հարստացում | ուստարվա ընթացքում |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /քննությունների նախապատրաստություն/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | 12-րդ դասարաններում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստում և իրականացում: | Ուսպլանի ապահովում, քննությունների նախապատրաստություն | դեկտեմբեր-հունվար |
| 2. | 12-րդ դասարաններում՝ առարկայական դասարանախմբերի ձևավորում, ժամաբաշխում, դասաբաշխում, ուսումնական կաբինետների նախապատրաստում : | Ուսպլանի ապահովում, քննությունների նախապատրաստություն | դեկտեմբեր-հունվար |
| 3. | 12-րդ դասարաններում՝ըստ ընտրված առարկաների առարկայական դասամատյանների կազմում, դրանց գործածության հրահանգավորում: | Ուսպլանի ապահովում, քննությունների նախապատրաստություն | դեկտեմբեր-հունվար |
| 4. | 10-11րդ դասարաններում <<առողջ ապրելակերպ>> դասընթացի կազմակերպում և վերահսկողություն: | Ուսպլանի հավելվածի պահանջների ապահովում | Ուստարվա ընթացքում |
| 5. | Հոսքային 10-11-րդ դասարաններում խորացված ուսուցմամբ առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողներից փոխադրական բանավոր կամ գրավոր քննությունների մասին իրազեկում, նախապատրաստում, կազմակերպում և անցկացում: | Քննական կարգի պահանջների ապահովում | Մայիս Հունիս |
| 6. | 12-րդ դասարաններում սովորողների ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների մասնակիցների նախնական հայտագրում: | Քննական կարգի պահանջների ապահովում | նոյեմբեր դեկտեմբեր |
| 7. | 2023-2024 ուստարվա շրջանավարտների միասնական և կենտրոնացված պետական ավարտական քննությունների փաստաթղթերի կազմում և առաքում էլ.փոստով ԳԹԿ | Քննական կարգի պահանջների ապահովում | Դեկտեմբեր-փետրվար –մարտ |
| 8. | Ըստ քննական առարկաների՝ շրջանավարտների պետական ավարտական քննությունների ցուցակների կազմում, ցուցակների էլէկտրոնային տարբերակների ուղարկում ԳԹԿ | Քննական կարգի պահանջների ապահովում | Նոյեմբեր |
| 9. | Պետական ավարտական քննությունների դիմում-հայտերի և ցուցակ-հայտերի ճշգրտում,փոփոխություններ կամ հաստատում: | Քննական կարգի պահանջների ապահովում | Ապրիլ |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՇՐՋԱՆ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | 2023-2024 ուստարվա փոխադրման,ավարտման և քննական կարգի իրազեկում ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում: | Ուսուցիչների, աշակերտների և ծնողների իրազեկում | Դեկտեմբեր<br>Մայիս |
| 2. | 2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում, փոխադրական և ավարտական քննություններին թույլատրում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | 3-10 հունիսի |
| 3. | Սահմանված ժամաքանակից ավել դասաժամ բացակայած աշակերտների հաշվառում, ցանկի ներկայացում մանկխորհին, փաստաթղթերի կազմում, քննությունների և ստուգարքների կազմակերպում և անց կացում, ծնողների իրազեկում, աշխատանք դասամատյաններով : | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Ըստ ժամանակացույցի |
| 4. | Քննությունների և նախաքննական խորհրդատվությունների աշխատակարգի և ժամանակացույցի կազմում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Դեկտեմբեր<br>Մայիս |
| 5. | 12-րդ դասարաններում ֆիզկուլտուրայի քննությունների նախապատրաստում ,կազմակերպում,իրականացում և ամփոփում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Հունիս |
| 6. | Քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների նախնական ցանկի կազմում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Դեկտեմբեր<br>Մայիս |
| 7. | Քննական կենտրոնի և քննասենյակների կահավորում | Քննական կարգերի պահանջների ապահովում | Հունվար<br>Հունիս |
| 8. | 10-11-րդ դասարաններում հոսքային առարկաներից փոխադրական քննությունների կազմակերպում և անցկացում,դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում դասամատյաններ: | Ավագ դպրոցի կանոնադրության համաձայն | Հունիս |
| 9. | 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների կազմակերպում և անց կացում,դրանց արդյունքների ամփոփում , արձանագրութիւնների կազմում և անցկացում աշակերտների անձնական գործերում | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Հունվար<br>Հունիս |
| 10. | Տարեկանից և փոխադրական քննություններից 3 առարկաներից անբավարար գնահատված 10 -11-րդ դասարանների աշակերտների ամառային առաջադրանքների հանձնարարում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Հունիս |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. | 12-րդ դասարանի տարեկանից և ավարտական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների վերաքննությունների նախապատրաստում և անց կացում, դրանց արդյունքների ամփոփում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | հուլիսի2-8 |
| 2. | Աշակերտների անձնական գործերի լրացման ու վարման գործունեության ստուգում ,այդ թվում էլեկտրոնային | Դասղեկների աշխատանքների կազմակերպում | Դեկտեմբեր,հունիս |
| 3. | Ավարտական փաստաթղթերի լրացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում և դրանց լրացում: | Դասղեկների կազմած տեղեկատվության ճշգրտում | հունիս |
| 4. | Ավարտական փաստաթղթերի լրացում,ստուգում և բաշխում: | Սահմանված կարգի և ժամկետի պահպանում | հունիսի 25-30 |
| 5. | Ուսուցիչների և Մ/Մ նախագահների տարեկան հաշվետվու-թյունների քննարկում: | Կատարողական վերլուծություն | Հունիս |
| 6. | Առանձին առարկաների տարեկան առաջադիմության մասին ամփոփագրերի կազմում: | Կատարողական վերլուծություն | հունիս-հուլիս |
| 7. | 2023-2024 ուստարվա հենքային ուսպլանի ծանոթացում, նախնա-կան կոմպլեկտավորում և դասաբաշխում ըստ գալիք տարվա դպրոցի ուսպլանի նախագծի: Հանրակրթության նոր չափորոշչին ծանոթացում | Գալիք ուստարվա նախապատրաստում | Հուլիս |
| 8. | Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2023 2024 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվության կազմում: | Կատարողական վերլուծություն | Հուլիս |

Հ. Բոշյան [signature] 01.09.2023թ